ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության աջակցության ծրագրեր
տարեկան հաշվետվություն
2023 թվական

Գյուղատնտեսության ոլորտում Կառավարության տեսլականն է առաջիկա տասը տարիների ընթացքում ունենալ շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ապրող երջանիկ և բարեկեցիկ գյուղական բնակչություն, բարձրորակ և մրցունակ գյուղատնտեսական ապրանք արտադրող փոքր ու միջին տնտեսավարողներ: Որակապես տարբերվող գյուղատնտեսության ստեղծմանը մասնակից ձեռնարկատիրական գործունեություն ծավալող բոլոր սուբյեկտներին Կառավարությունը ընձեռում է միատեսակ պայմաններ, հավասար հնարավորություններ, արդար մրցակցային և կայուն միջավայր:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը շուրջ 948.04 մլրդ դրամ է, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 0.3 %-ով, այդ թվում՝ բուսաբուծության ծավալը կազմել է շուրջ 447.6 մլրդ դրամ (աճել է 2.7 %-ով), իսկ անասնաբուծության ծավալը՝ շուրջ 500.4 մլրդ դրամ (նվազել է 3.4 %-ով):

Ներկայումս գյուղատնտեսության ոլորտում իրականացվում են մեկ տասնյակից ավելի պետական աջակցության ծրագրեր, որոնց հիմնական նպատակը գյուղատնտեսությունում կապիտալ ներդրումների ծավալների ավելացումն է, արտադրական հզորությունների ընդլայնումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումն ու գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների կայունացումը: 2018-2023 թվականներին գործողության մեջ դրվեցին նոր՝ խոշոր ներդրումային ծրագրեր, միաժամանակ գործող ծրագրերում իրականացվեցին բազմաթիվ փոփոխություններ, որոնց մեծ մասը նախատեսված էր տնտեսական նոր իրավիճակներում գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու, ապահովագրական համակարգի բարելավման ու ընդլայնման, ինչպես նաև կլիմայի փոփոխություններին հարմարվողականության և մեղման քաղաքականությունների ներդրմամբ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու, փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունները ճշգրտելու գործողություններ իրականացնելու համար: 2023 թվականին գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ներդրումների ծավալը կազմել է շուրջ 93.3 մլրդ դրամ, որից միայն կապիտալ ներդրումների ծավալը՝ շուրջ 72.0 մլրդ դրամ:

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24–ի N 1485-Լ որոշմամբ հաստատվել է Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակում ապահովագրվում են ծիրանի, խաղողի, դեղձի, խնձորի, հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ), կարտոֆիլ, սալոր, կեռաս, բալ, ձմերուկ և սեխ մշակաբույսերը՝ կարկուտ, գարնանային ցրտահարում, երաշտ և հրդեհ ռիսկերից:

Ապահովագրական ընկերությունների և վերաապահովագրող կազմակերպության համար գործընթացի ոչ եկամտաբեր լինելու հետ կապված խնդիրների կարգավորման նպատակով ՀՀ կառավարության 2023 թվականի հունվարի 26-ի N 99-Լ որոշմամբ ծրագրում կատարվել է փոփոխություն, որով սահմանվել է, որ ծրագրի շրջանակում յուրաքանչյուր հեկտարին համապատասխան ապահովագրված ծածկույթի համար կիրառվող ոչ պայմանական չհատուցվող գումարի (ֆրանշիզայի) չափը յուրաքանչյուր գյուղատնտեսական տարվա համար կսահմանվի գործակալության խորհրդի կողմից: 2023 թվականին չհատուցվող գումարը կազմում է 15%՝ նախկին 10%-ի փոխարեն:



Գծապատկեր 1. Ծրագրի շրջանակում 2020-2023թթ.-ին գրանցած արդյունքները

Գծապատկեր 1-ում ներկայացված է ծրագրի մեկնարկից մինչև 2023 թվականի գյուղատնտեսական տարվա համար պայմանագրերի կնքման վերջնաժամկետի դրությամբ արդյունքները, համաձայն որոնց, 2023 թվականին 2022 թվականի համեմատ ծրագրի շրջանակում կնքված պայմանագրերի քանակը աճել է 81%-ով, իսկ ապահովագրված մակերեսի մասով ցուցանիշը աճել է 100%-ով:

Ծրագրի շրջանակում իրականացվում է ապահովագրավճարի առնվազն 50-60 %-ի սուբսիդավորում:

2023 թվականի գյուղատնտեսական տարվա համար Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 10192 ապահովագրության պայմանագիր՝ 11662 հա ընդհանուր մակերեսով տարածքի համար, համախառն ապահովագրավճարը կազմել է 1.8 մլրդ դրամ, սուբսիդավորման գումարը՝ 1.1 մլրդ դրամ: Սույն թվականին ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 3864 ապահովագրական հատուցում՝ շուրջ 2.7 մլրդ դրամի չափով:



Գծապատկեր 2. 2020-2023թթ.-ի սուբսիդավորման գումարների չափը, մլն դրամ



Գծապատկեր 3. 2023 թվականին ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսն՝ ըստ մշակաբույսերի, հա



Գծապատկեր 4. 2023 թվականին ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը՝ ըստ մարզերի, հա

2023 թվականին ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 3864 ապահովագրական հատուցում՝ շուրջ 2.7 մլրդ դրամի չափով:



Գծապատկեր 5. 2023 թվականին հատուցումների քանակն ու գումարն՝ ըստ մարզերի



Գծապատկեր 6. 2023 թվականին հատուցումների քանակն ու գումարը՝ ըստ ապահովագրվող մշակաբույսերի

Ծրագրի նպատակն է ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող խաղողի, (միայն խաղողի տեխնիկական գինեմետ սորտերով), ինտենսիվ պտղատու այգիների, հատապտղանոցների հիմնման, ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակման, ինչպես նաև ոռոգման արդիական համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդրման պետական աջակցության միջոցով՝ խթանել ժամանակակից, բարձր բերքատվությամբ այգիների հիմնումը:

Ծրագիրն իրականացվել է ՀՀ ամբողջ տարածքում՝ երկու բաղադրիչով՝ վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման և ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով:

Վարկային բաղադրիչ

2023 թվականին տրամադրվել է շուրջ 57.3 մլրդ դրամ ծավալով վարկ, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 8.9 մլրդ դրամ: Այգեհիմնման նպատակով հաստատվել է շուրջ **1875** հա-ի, ոռոգման արդիական համակարգերի ներդրման և ջրավազանների կառուցման նպատակով՝ շուրջ **175** հա-ի, կարկտապաշտպան ցանցերի տեղադրման նպատակով՝ 26 հա-ի և բարձրարժեք մշակաբույսերի մշակության նպատակով՝ 7.2 հա-ի վարկային հայտ:

Փոխհատուցման բաղադրիչ

2023 թվականին կնքվել է փոխհատուցման 243 պայմանագիր, որից՝ այգեհիմնման նպատակով 138 պայմանագիր շուրջ **488** հա-ի համար, տրամադրվել է շուրջ 1.15 մլրդ դրամ գումարի 16 փոխհատուցում՝ 75.7 հա հողատարածքում այգեհիմնման համար: Ոռոգման արդիական համակարգերի ներդրման նպատակով կնքվել է 105 պայմանագիր շուրջ 559 հա-ի համար, տրամադրվել է շուրջ 121 մլն դրամ գումարի 28 փոխհատուցում՝ շուրջ 111 հա-ի համար:

Ինտենսիվ այգեգործության նախորդ ծրագրի շրջանակում վարկային բաղադրիչով տրամադրվել է շուրջ 2.3 մլրդ դրամի սուբսիդիա, իսկ փոխհատուցման բաղադրիչով տրամադրվել է շուրջ 2.56 մլն դրամ գումարի 1 փոխհատուցում՝ շուրջ 0.5 հա-ի համար:



Գծապատկեր 7. 2023թ. ինտենսիվ այգեգործության ծրագրի շրջանակում վարկային և փոխհատուցման բաղադրիչով հաստատված հայտերը՝ ըստ ուղղությունների, հա



Գծապատկեր 8. 2023թ. ինտենսիվ այգիների հիմման նպատակով հաստատված հայտերը՝ ըստ մարզերի



Գծապատկեր 9. 2023թ. ինտենսիվ այգիների հիմնման նպատակով հաստատված հայտերը՝ ըստ պտղատեսակների, հա

Ծրագրի հիմնական նպատակը գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումն է, որը ագրարային ոլորտի մրցունակության և արդյունավետության բարձրացման, արտադրական ներուժի լիարժեք օգտագործման և գյուղատնտեսական արտադրանքի ծավալների աճի հիմնական գործոններից է:

2023 թվականին ձեռք է բերվել 719 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 213 միավոր տրակտոր, 5 միավոր կոմբայն, լիզինգի գումարը կազմել է շուրջ 3.1 մլրդ դրամ, սուբսիդավորման գումարը՝ շուրջ 809.6 մլն դրամ:



Գծապատկեր 10. 2023թ. ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի քանակը՝ ըստ մարզերի



Գծապատկեր 11. 2018-2023թթ. ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի քանակ



Գծապատկեր 12. 2018-2023թթ. ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի քանակ (հատ) և լիզինգի գումար (մլրդ դրամ)

Ծրագրի հիմնական նպատակն ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ լիզինգի մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է, որը նախադրյալներ կստեղծի գյուղատնտեսական ծագման մթերքների և դրանց վերամշակված արտադրանքի արտադրության ծավալների ավելացման, միջազգային չափորոշիչներին համապատասխան որակական և անվտանգության պահանջների ապահովման, մրցունակության բարձրացման, արտահանման ծավալների ավելացման, ինչպես նաև ներկրվող արտադրանքը տեղական արտադրությամբ փոխարինելու համար:

2023 թվականին ձեռք է բերվել 495 միավոր սարքավորում, լիզինգի գումարը կազմել է շուրջ 6.2 մլրդ դրամ, սուբսիդավորման գումարը՝ շուրջ 3.5 մլրդ դրամ:



Գծապատկեր 13. 2019-2023թթ. ծրագրի շրջանակում լիզինգով ձեռք բերված սարքավորումների քանակը՝ ըստ տարիների



Գծապատկեր 14. 2023թ. ծրագրի շրջանակում տրամադրված լիզինգի քանակը և գումարը՝ ըստ մարզերի

Ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հումք մթերող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը:

Ծրագրի շրջանակում 2023 թվականին հաստատվել է 221 հայտ՝ շուրջ 15.5 մլրդ դրամի ծավալով, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 3.8 մլրդ դրամ: 2023 թվականին մթերվել է շուրջ 86.0 հազար տոննա պտուղբանջարեղեն և շուրջ 160.0 հազար տոննա խաղող:



Գծապատկեր 15. 2023թ. ծրագրի շրջանակում տրամադրված վարկերի քանակը և գումարը՝ ըստ մարզերի

Ծրագրի նպատակն է խթանել արդիական չափորոշիչներով փոքր և միջին ջերմատների կառուցումը, ինչը հնարավորություն կտա բարձրացնել ջերմատնային տնտեսությունների արտադրանքի մրցունակության մակարդակը, կնպաստի գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

2023 թվականին կնքվել է 12 պայմանագիր 299.1 մլն դրամ ծավալով և տրամադրվել է 327.1 մլն դրամ ծավալով փոխհատուցում, որի արդյունքում հիմնվել է 13 ջերմատուն՝ ընդհանուր 2.3 հա տարածքով:

Գծապատկեր 16. 2023թ. պայմանագրերի և հիմնված ջերմատների քանակը և փոխհատուցված գումարի չափը

Ծրագրի նպատակը ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է:

Ծրագրի շրջանակներում 2023 թվականին ձեռք է բերվել 369 գլուխ կենդանի՝ 363.0 մլն դրամ արժեքով, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 139.5 մլն դրամ:



Գծապատկեր 17. 2023թ. ձեռք բերված կենդանիների գլխաքանակը՝ ըստ մարզերի



Գծապատկեր 18. Ձեռք բերված կենդանիների գլխաքանակը՝ ըստ տարիների (2019-2023թթ.)

Ծրագրի նպատակն է պետական աջակցության մեխանիզմների, մասնավորապես, մատչելի վարկավորման պայմանների կիրառման և ծախսերի փոխհատուցման միջոցով հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, բարձրարժեք տոհմային ոչխարների և այծերի ձեռքբերման (ներկրման) և բարձր մթերատու հոտերի ձևավորման խրախուսումը:

Ծրագրի շրջանակում նախատեսվել է տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռքբերման մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցությունը իրականացնել 2 եղանակով.

2023 թվականին ձեռք է բերվել 301 գլուխ կենդանի, փոխհատուցման և վարկի գումարը կազմել է 24.7 մլն դրամ:



Գծապատկեր 19. 2023թ. ձեռքբերված կենդանիների գլխաքանակը՝ ըստ մարզերի



Գծապատկեր 20. 2019-2023թթ. ձեռքբերված կենդանիների գլխաքանակը

Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել կենդանիների պահվածքի պայմանները՝ արդյունքում բարձրացնել կենդանիների մթերատվության ցուցանիշները, որի համար առաջադրվել են փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի և դրանց տեխնոլոգիական ապահովման մատչելի տարբերակներ, իրականացվել են անասնաշենքերի կառուցման համար անհրաժեշտ ներդրումների առկայություն և ծախսերի փոխհատուցում:

2023 թվականին կնքվել է 4 պայմանագիր, շահագործման է հանձնվել 2 անասնաշենք և տրվել է 8 փոխհատուցում՝ 69.3 մլն դրամ ծավալով:

Գծապատկեր 21. 2023թ. պայմանագրերի և կառուցված անասնաշենքերի քանակը և փոխհատուցված գումարի չափը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է նպաստել ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման ինստիտուտի կայացմանը, հանրապետության տարածքում կենդանիների տեղաշարժի նկատմամբ վերահսկողության բարելավմանը, անասնաբուժասանիտարական տեսակետից բարձրորակ անասնապահական հումքի և մթերքի արտադրության ապահովման բարելավմանը, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանության մակարդակի բարձրացմանը, տավարաբուծության տեղեկատվական հարթակի կատարելագործմանը, կենդանիների կերակրման, պահպանման, անասնահակահամաճարակային միջոցառումների, ինչպես նաև կենդանիների սպանդի, կենդանիների ծագման հումքի և մթերքի վերամշակման, պահեստավորման և իրացման արդյունավետության գնահատմանը, կենդանիների պահման, բուծման և օգտագործման ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման համակարգի կատարելագործմանը, կենդանիների և կենդանական ծագման հումքի և մթերքի միջազգային առևտրի զարգացման համար նմանատիպ միջազգային ստանդարտներով կենդանիների պահպանության և օգտագործման պահանջների ներդաշնակեցմանը, սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացմանը, հետագծելիության ապահովմանը:

Ծրագրի շրջանակում 2023 թվականին իրականացվել է **410505** խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է հանրապետությունում տեղական անասնաբուծական արտադրանքի արտադրության ծավալների ավելացման համար կատարվող ներդրումների մասնակի փոխհատուցման միջոցով նպաստել ճյուղում կատարվող ներդրումների ավելացմանը, անասնաբուծական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը, տեղական արտադրության խթանմանը, ճյուղի գրավչության մակարդակի բարձրացմանը, որը մեկնարկել է 2022 թվականին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում:

Ծրագրի շրջանակում **6** կազմակերպությունների հետ կնքվել են պայմանագրեր (թռչնաբուծության, խոզաբուծության և տավարաբուծության ոլորտներում)՝ շուրջ **32 մլրդ** դրամ ծավալով ներդրումներ կատարելու նպատակով:

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԱՅԳԵՀԻՄՆՄԱՆ և ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

Ծրագրի շրջանակում Բերքաբեր բնակավայրում կնքվել է 45 պայմանագիր՝ 4.504 հա-ի համար, իսկ Խաշթառակ բնակավայրում՝ 46 պայմանագիր՝ 2.441 հա-ի համար:

ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան, Նորակերտ և Խոյ համայնքի Հայթաղ բնակավայրերում իրականացվել է վարելահողերի և բազմամյա տնկարկների իրավական խնդիրների ամբողջական գույքագրում, իսկ Արմավիր համայնքի Մայիսյան բնակավայրում իրականացվել են չմշակվող հողերի գույքագրման աշխատանքներ: Հայթաղ բնակավայրում Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռք է բերվել 11.4 հա ընդհանուր մակերեսով 39 հողակտոր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ (ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱՅԻ) ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակում կնքվել է 1 պայմանագիր (10-30 հա հողերի միավորում):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակում 2023 թվականին տրամադրվել է շուրջ 4.59 մլրդ ՀՀ դրամ փոխհատուցում: Ծրագրի իրականացման արդյունքում ցանքատարածությունները 2022 թվականին 2021 թվականի նկատմամբ աճել են շուրջ 15000 հա-ով:

Շիրակի մարզ

- 0.6 հա այգեհիմնման հայտ
- 2 ջերմատուն
- 28 գլուխ ԽԵԿ
- 200 գլուխ ՄԵԿ
- 61 գյուղատնտեսական տեխնիկա
- 257 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 3642 հա ապահովագրված տարածք
- 173.5 մլն դրամ ապահովագրական հատուցում

Արագածոտնի մարզ

- 213 հա այգեհիմնման հայտ
- 1 ջերմատուն
- 27 գլուխ ԽԵԿ
- 47 գյուղատնտեսական տեխնիկա
- 1.7 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 996 հա ապահովագրված տարածք
- 663 մլն դրամ ապահովագրական հատուցում

Արմավիրի մարզ

- 1856 հա այգեհիմնման հայտ
- 2 ջերմատուն
- 50 գլուխ ՄԵԿ
- 197 գյուղատնտեսական տեխնիկա
- 1.4 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 1395 հա ապահովագրված տարածք
- 711.5 մլն դրամ ապահովագրական հատուցում

Տավուշի մարզ

- 39 հա այգեհիմնման հայտ
- 66 գլուխ ԽԵԿ
- 37 գյուղատնտեսական տեխնիկա
- 5.5 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 69 հա ապահովագրված տարածք
- 3.1 մլն դրամ ապահովագրական հատուցում

Գեղարքունիքի մարզ

- 14 հա այգեհիմնման հայտ
- 1 խելացի անասնաշենք
- 5 գլուխ ԽԵԿ
- 40 գյուղատնտեսական տեխնիկա
- 24 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 973 հա ապահովագրված տարածք
- 77.6 մլն դրամ ապահովագրական հատուցում

Վայոց ձորի մարզ

- 18 հա այգեհիմնման հայտ
- 23 գյուղատնտեսական տեխնիկա
- 72 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 74 հա ապահովագրված տարածք
- 5.5 մլն դրամ ապահովագրական հատուցում

Արարատի մարզ

- 79 հա այգեհիմնման հայտ
- 5 ջերմատուն
- 90 գլուխ ԽԵԿ
- 81 գյուղատնտեսական տեխնիկա
- 979 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 1079 հա ապահովագրված տարածք
- 746.1 մլն դրամ ապահովագրական հատուցում

Լոռու մարզ

- 4.5 հա այգեհիմնման հայտ
- 17 գլուխ ԽԵԿ
- 68 գյուղատնտեսական տեխնիկա
- 143 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 3152 հա ապահովագրված տարածք
- 284.1 մլն դրամ ապահովագրական հատուցում

Կոտայքի մարզ

- 136 հա այգեհիմնման հայտ
- 3 ջերմատուն
- 116 գլուխ ԽԵԿ
- 50 գյուղատնտեսական տեխնիկա
- 903 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 102 հա ապահովագրված տարածք
- 8.7 մլն դրամ ապահովագրական հատուցում

Սյունիքի մարզ

- 2.5 հա այգեհիմնման հայտ
- 1 խելացի անասնաշենք
- 20 գլուխ ԽԵԿ
- 51 գլուխ ՄԵԿ
- 5 գյուղատնտեսական տեխնիկա
- 12.8 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 180 հա ապահովագրված տարածք
- 4.1 մլն դրամ ապահովագրական հատուցում